

հաղորդելու թէ խօսքով և թէ օրինակով։ Դպրոցների հոգա-  
բարձուք, խնամակալք, կտությարիչք և ուսուցիչք, վոխտ-  
նակ անձնական և մասնաւոր ինստրիվների ասպարէզ անելու  
իրանց յանձնուած դպրոցները, պէտք է աշխատեն աւելի սոցա-  
մէջ ապահովուած հայ ապագայ սերնդի մուաւոր և բարոյական  
կրթութեան համար։ Եթէ մեր եկեղեցականք, ծնողք և հայ  
մանկուոյ կրթութեան աշխարհական պաշտօնեայք հոգ չտա-  
նեն իրանց պարագը ճշտութեամք և խղճի մոռք կատարելուն,  
մեր ապագայն կլինի բարոյական անկումն և կորուսու։ Խակ  
այդպիսի դէպքում պատասխանատուութիւնն այն անձանց,  
որոնց անհոգութեամք և անտարբերութեամք կտուժէ խեղճ  
ազգը—մեծ կլինի թէ Աստուծոյ և թէ պատմութեան տուած։  
Այս զարհութեական պատասխանատուութիւնը թող հայ եկեղե-  
ցականաց և աշխարհականաց մուածման առարկայ գառնայ և  
զգաստանան, քանի որ գեռ ուշ չէ։

## ՊԱՏՄԱԿԱՆ

. . . . ԽԺԱԳԵՐ ՏԵՐ,

Հայք Ինքնավարսթենէ զրկուելուց 400 տարի յետոյ յաւարտ 18րդ  
դարու երր արդէն ենթարկուած էին ազգի ազգի տանջանաց : . . , երբ  
Օսմանեան կառավարութիւնը նոր սկսեր էր ձեռն կարկառել Հայաստանի  
այդ հեռաւոր գաւառուաց վրայ, դարձեալ պարսից և ոռուաց հետ անդադար  
պատերազմներու միջոցին քիւրդ տեղակալ պէյերու և գունդագունդ աւա-  
զակաց խմբերու ձեռք որպես համրիչ կը գառնային. մինչ ցթանդիմաթի  
հաստատութիւնը, որ հետզիւտէ նոցա առաջքն առաւ, հայքն աղասելով  
իրենց նախկին անտանելի վիճակէն, որ ըստ կարեաց ձեռն արդի գրել որ  
ժամանակի տգիտութեան առմիւ դուրս է մնացած նոր պատմութեան տե-  
սութիւնից։

Որին թէպէտեւ չկրցայ այն կենդանի գոյնն ու նկարը տալ՝ որպէս  
պարտ ու պատշաճն էր, բայց և այնպէս «Նկարագիր Ս. Յովհաննու վտ-  
նուց և վիճակին նորին Բագրեւանդայ» անուն վերնագրով պատմական յօ-  
դուածն իւր հետաքրքրական բովանդակութեամբն ևս ոչ նուազ լոյս պիտի

սփռէ մեր մօտիկ անցեալի վրայ, որով չի մերժումիր 2եր տեսութենքն, հիւրնկալել զայն 2եր ազգոգուտ հանդիսի մէջ ի քաջալերութիւն միրայնոց որ դարձեալ պատճառ պիտի լինի ինձ նոյն խնդրոյն մնացեալ մասն ևս նկարագրելով՝ 2եղ ուղարկել, ինչպէս այս անդամ։

## Պ. 6. ՄՈՒՐԱՑԵԱՆՑ.

1888 յուլիս 20. Ալաշկերտ և գիւղն ԶԷտկան։

## ՆԿԱՐԱԳԻՐ Ս. ՅՈՎՃԱՆՆՈՒ ՎԱՆՈՒՑ

ԵՒ

ՎԻՃԱԿԻ ՆՈՐԻՆ ԲԱԳՐԵՒԱՆԴԱՑ.

ՈՄԾԴԻ Հայոց թուականին՝ այն է Օսմանեան պետութեան կիւլ-հանէի օրէնսդրութեան հաստատումն ՅՅ տարի յառաջ, դեռ ևս բգեշիք (միւթէսարիֆ կալա) և կիւրապաղատք (Դայմագամ) ըստ տեղական պահանջման կը հաստատուէին տիրապետող քիւրդ բէյերից։ Քիւրտ տարրը կազմուած է մի քանի աշխրաթներից, որը ունին իրենց առանձին կոչումը ու էլաղասին (ցեղապետ)։ իւրաքանչիւր ցեղապետ ունենալով ընդձեռւամբ իւր ջոկ այրուձին իր իսկ ցեղից և մերձաւորներից կազմուած։ Այս նոցանից հզօրագոյն Ելաղասին կամ բէյը մի ողջ գաւառի և գաւառակների իշխանութիւնը կընդունէր բարձրագոյն իշխանութիւնից կաշառքով։ Սոյն նոր Միւթէսարիֆն, որ միանգամ մահու և կենաց ոուրն ի ձեռին առած կուգար, իր ռոճիկը կստանար իր կառավարութիւնից թէ չէ, լաւ չեմ յիշեր։ միայն սա գիտեմ, որ թոշակը իր այրուձիով հանդերձ կառնէին կարծածից ալ աւելի հայ ժողովրդէն։

Սոյն իշխանութիւնը՝ երաշխաւորեալ չէ, երկարատև չի կարող լինել շատ չանցաւ կառավարիչ բէկը կրեսոսի վարպետ որդիներէն մին դարձաւ, բազում հարասութիւն կուտեց, իւր բեռը կապեց և ահա միւս օր մէկէլ տեսնես գուժկանը գլխարաց, բորիկ, միատակ շապկով ու հնոտի ճերմակ վարտիկով աչք յարտասուս լացն ի բերան աղիթզորմ ճիչ արձակելով կորաքամակ եկաւ, ելաւ յատեան փաշայի յայտնելով՝ « ի սէր Աստուծոյ Սիպկանցի Հիւմէին աղայն եկաւ թալլանեց, զարկեց

տարաւ մեր ամէն շարժական կայքը, զոմանս գերի վարելով, տեարք, օգնութեան հառէք, գոնէ մեր օրապահիկն ու գերին ազատեցէք : Խոկոյն փաշային ոտից ցգլուխ զինուած իւր պատերազմիկ սյրուձիով վրայ կը հասնէր ընդ հուպ արիւնահեղ կռիւ կը ծագէր ի վաղիւ անդր փաշայն և տոպտոտակիչ ցեղապետը ի Կարին կուսակալի քով կը իրութային հասնել առ ի դատապարտելոյ զմիմեանտ այլ և այլ բարուրանօք : «Որովհետե Միւթէսարիփը իւր նախորդի գլուխն նմանօրինակ գեր մը խազցեր էր . այժմ կարգն եկաւ իրեն : Կաշառքը մեծ գեր խազց . դատին պարտաւորեցաւ նա, հրոսակապետն լիազօր կառավարչապետութեան պաշտօնն ստանձնած յաղթանակաւ եկաւ ի Պայաղիթ : — Զին ու ջորին կուռեցան, էշն ոոքի տակ ընկաւ ոտքերն մեկնեց, փոռեցաւ : — Նոքա կը շահին, երկուքի համար ալ սովորական բան է, ամօթ չէ դա, գէթ խեղճ հայք զոհ լինին նոցա կրից և շահուն :

Հայաբնակ գաւառները : որ այն ժամանակ առաւել և օ բազմամարդ էին, քան թէ հիմա, ուրիշ գործ ու զբաղմունք չունէին, բացի գիշեր ցորեկ աշխատելէ ոչ - քրիստոնեայ յաճախորդներին ձրի հաց մատակարարելու : Այն ինչ հաստատելու համար յառաջ կը բերեմ մի քսոմնելի անցք, թող զգոյուն սիրտգ չիիրաւորի . . . ընթերցողք, կը վեր առնեմ նա մի տապանաքարէ, որ կարգացուեր է Ալիկօր գեղջ գերեզմանատան մէջ : Ես նահատպետ Մարտիրոսսեան, կուռի տարին որ անց ու գարձը չափազանց էր, միայն մի օր իմ սեպհական հաց ու ջրով կերակրեցի 1000 անկանոն այրուձի, երբ երեկոյեան ամենաետին գալողն եկաւ, ոչինչ գտաւ ուտելու ի տան իմում : Քաշեց գօտուց ատրճանակը և պարպեց զայն ինձ վերայ, անտի դիաթաւալ գետին ընկնելով՝ հոգիս աւանդեցի առ Աստուած, որը ապա հեռանալով ազատ մեկնեցաւ գնաց :

Ոչ մի հայորեար չէր վստահիլ յայնժամ գոնէ մի սորուկ մահմետականի սիրտ կոտրել, ուղածը չտալ, ըստորում՝ բաւական էր նա իւր հոգին ներկէր, երթայր փաշայի առաջ յայտնէր թէ այս ինչ կամ այն ինչ անձը ինձ բերան . . . հայհոյեց . միւս օր նա կախաղան բարձրացած ընդ քարշ կերթար, կուգար :

Սովորաբար քիւրտերը ապրուսաի ուրիշ եղանակ չունենաւ լով հայութնակ գիւղօրայքն էին գտել իրենց համար եզակոն արգաւանդ դաշտ կերակրից Աշունքէ աշունք կալերէն կը վերցնէին իրանց միամեայ պաշարը քիչ անգամ սակաւ ինչ գնորդով Վրանաբնակ են նպքտ քար քարի վրայ դրած չեն պատուպարուելու յատուկ շենք չունին:

Ահա ձմեռն եկաւ տեղատարափ ձիւնը երկինքէն կը տեղայ նոքա լեռներէն վար իջած չուեցին տարւոյն դատաւորի բաժանմամբ խումբ խումբ կազմած զետեղուեցան ի հայութնակ գիւղօրայս որը ի նոցանէ և եթ փոխանակ հայոց կըստանար մի չնչին տուրք իր քսակին յատկացեալ Մէն մի տուն իր անասնովք հանդերձ մի հայ տան վրայ գնալով նորա լնաւերաբանի մէջ՝ տեղ առնելէ վերջ՝ մարագի բանալիքը խոտի գէղը անձնիւր անկոչ հիւրի ձեռք անցնելու էր որքան կամենայ նա իւր անասնոց առաջ մսուրքը կը լեցնէ ոչ քաղելուն մէջքն է ցաւել ոչ կրկուն և ոչ ես բարդելուն Յայնժամ հայ գերանդուորի սիրուր ճմէր աղիքը գալարէր աչք գոցէր առ ի չտեսանել բայց ինչ օգուտ իւր իրաւունքները բռնարարուած էին արգէն դատն ամենադատաւոր գերագոյն Եակին այցելութեան էր թողած Վերջապէս բռնի կերակրել կուտային իւրեանց անասունքն՝ մինչեւ որ գարուն պարգևէր նոցա նոյնպէս ձրի առատ խոտ ու ջուր լերինք ծածկուէին կանաչազարդ տերեօք արծոով և երիներանդ ծաղկամբք որք ուր ուրեմն դուրս սոզային իրենց տեղակալած օթեակներէն բովանդակ մարդոյ և անասնոյ պաշարը սպառելով:

Տեղական բարբառով կերակրուող տարրը կըսուէր զլախճի իսկ կերակրիցը զլայ առաջինք էին ջիւանցի Սիպիանցի Հայտարանցի Զամալտանցի Զալալցի Մամանցի Սալարցի Բարազցի և այլ ինչ սոցին նման բազում խառնիճաղանճ աշիրաթրաթներ որք լինէին թուով աւելի քան 10,000 տուն:

Բայազիթ նստող փաշաներէն առաջինը եղաւ իրահիմ բէկ ոմն որ իորհեցաւ նոցա վրանները բառնալ ընդ լծով հնազանդութեան գնել որ իրենց բնակութեան համար տուներ շինեն հողագործութեամբ և արհեստիւք պարապին կամ այն է իւր

իշխանութեան երկրէն գուրս գնան։ Բաւտկան է ասաց նա -  
որ այլոց աշխատանքով կերակրութին, երկրի բարդաւաճման ար-  
գելք գառնալով՝ որպէս մուկն ու մորեխ կոծեն և չորացնեն  
նորա արդիւնաբերութիւնը։

Գովելի ձեռնարկ, սակայն ուրբաթ շուտ եկաւ քան զշա-  
բաթ։ Գործն աւելի չարագոյն հետեւանք ստացաւ, վասն զի  
այս լսելով քիւրդ քէկերը, որ Երասխածորի Բարթող լերան ամա-  
րանոցները կը բնակէին, դիմեցին Երևանի նահանգապետ պար-  
սիկ Հասանխանի և նորա խորհրդով ու զօրութեամք գառնալով  
զայրացեալ քիւրտք միահամուռ արշաւեցին Բայազետի լերայ։

Յայնժամ Իբրահիմ փաշան սե շուտարաւ, իւր նախազիծը  
փութով խոյս տուաւ իր երերեալ մոքէն։ Այս որ խնամ տա-  
նէր զերթ հայր հայ գիւղօրէից վիճակը բարւոքելու. այժմ կը  
նկրաի գէթ իւր անձը պաշտպանել։

Ի՞նչ ընէ խեղճը, գայլը որքան պաշես, ընտանի կենդանի չի  
դառնալ։ Նառ կռուեցան, շատ էլ մարդ մեռան. թէև Բայա-  
զիսը ըսկարողացան առնել, ձերբակալել զիբրահիմ փաշան.  
բայց և այնպէս պաշարման մէջ թողնելով զնա, իբրև վայրագ  
գազան անցան, Բագրեանդէն սկսեալ կողոպտեցին, կոտորեցին  
մինչ ի Ցուարածատափ. զորս աւեր և ի չիք գարձուցին։ Այս  
աւարառութիւնք . . . 1807 թուականից սեպտեմբեր 1 էն  
սկիզբն առեալ շարունակուեցաւ մինչ ի յամն 1829, այսինքն  
ողջ 13 տարի։

Այս միջոցին հայոց կրած բիւր ազգի վիշտն ու տառապանք  
իմ տկար գրիչ չի զօրեր մերկապարանոց դուրս ածել, այլ կը  
թողում ուշիմ մոաց գատել։ Գաւառի փարթամ ու հիւրըն-  
կալիչ էշխանք փոխանակ լօդկի (Օիւպէ) քուրձ զգեցած, չուա-  
նէ գօտի մէջքունք կապած բոկ և հետի իրենց թշուառ ընտա-  
նեաց ձեռքէն բռնած յերկրէ երկիր կածէին, յԱյրարատ, Ար-  
տազ, ի Կեսարիա, ի Զիոնտա և ի Հիճազ. . .

Այնպէս եղաւ որ եօթ տարի գիւղերն ու գաշտերը Դիոգե-  
նէսի լապտերով ժուռ. գայիք մի հայ մարդ չէիր կարող գոնել,  
այլ միայն հետեւեալ հինգ. ամրոցները բնիկ և փախստէից մաս  
մը ապաստանած ամրացան, կացին ի Բայազիթ, ի Դիատուն, ի

վոնս Ս. Յովհաննու, ի Վաղարշակերտ և ի Մաղաղի:

Սակայն տեսնենք Իբրահիմ փաշան կըտանի՞ այդ անպատուութիւնը, աւելի քաջ համարուած մնացեալ հայորեարք կրնան հանգիստ գոնել, և այդ անտանելի վիճակից ազատուելու համար նոքա ի՞նչ միջոցների ձեռք պիտի զարկէին:

Ի 1808 ի 1 ն յունվարի իբրև վիրաւորեալ արջ գուրս եկաւ նա իւր պաշարման վիճակէն, կրկին զօրք ժողովեց առաւել քան զառաջինն, ընդ որս և Արծափեցի հայազգի Բանէեան խորտիշագեղն քաջարին Մանուկ 1000 հրացանաւոր հետեւակ հայոց զօրքով՝ յառաջ խաղաց նոքօք հանդերձ բուն բարեկենդանին հասաւ ի Վաղարշակերտ, ուր էր ամրացեալ հրոսակապետ Թամար բէգը։ Արիւնահեղ ճակատամարտներէ զինի, երբ տեսաւ նա այլ ևս չի կարող առնուլ զհողարերդն, պաշարեց զնա ի դղեկի անդ և դարձաւ յետ ընդ կրունկ իւր տարութերեալ, չարութեան թոյնը թափեց մնացեալ հսյ ընտանեաց վրայ։ Հեղեղանման ծանօթ կողոպուտէն ազատուած հայոց բովանդակ անասնեղէնք, տանց կահ կարասիք հաւաքեց նաև 3000 սոմար ցորե ոնի, որը յանձնեց նոցա շալակով տանել, ամբարել յիւշ—Քիւիսէ վանքը, ուստի հեռու է ի նոցանէ իբր 13 ժամու ճանապարհաւ։

—ԴԵՇ, շնոր զօրքը պիտի դառնայ այնտեղ, նոցա պաշար է հարկաւոր, յետաձգել չի կարելի։

Իբրահիմ փաշայի սոյն ստիպողակտն հրամանն իսկոյն գործադրուեցաւ։ Արական սեռի ամեն հասակի անձինք իւրեանց բեռները կապեցին պրծան, կռնակնին առած, ուղեւորեցան։

Որովհետեւ եղանակը կարի ձմեռ էր, բուք էր, զրեթէ ամեն օր գառնաշունչ հովը իւր գերը կըկատարէր, ամնբրոպաշուք այերք մշտառատ ձիւն կը տեղային։ մարդահասակ ձիւն էր նատած գետնի վրայ, ճանապարհները փակուէր էին, թւլչունք իրենց թևերով չէին կարող թռչիլ, երթալ գալ։ Իբրահիմ փաշան 2000 թիաւոր ևս հայերից վեր առաւ իւր հետ ուղին հորդել բանալ զօրաց և ռազմամթերից փոխադրման համար։

Երեւակայութեամբ ոլացիր այնտեղ, գառն աշխատաշնք, լաց, կոճ և աղաղակ։ մորակի և վարոցի շիրտոց շատ անդամ

օդին կըշփուի: բեռնաբարձ թիւաւորի աչքերից արտասուլք քամելով եղանակին խստութիւնը առաւել ևս կդառնացնէ: Բազմաց ոտքունք և ձեռքունք, ունչք ու ականջները յըրտատար եղան, սմանք սաւեցան իսկ ճանապարհան. նոյա գերեզմանը շեղջակոյտ ձիւնն եղաւ, իսկ կարգակատար քահանայն սուլող քամու ձայնն ու շվոցն, որ զինչ եղերամայր կորոտայ ու կարդայ:

Հուսկ ուրեմն երկիրը ճռաքաղ առնելով՝ մնացեալքն ինքն իսկ փչացրեց, Հոգեգալստեան կիւրակին ժամանելով իւր տեղն ի Բայազիտ:

Այնուհետեւ իրացն եղելութիւնը արձագանք գտնելով կարնոյ կուսակալութեան դահլիճը, Երբահիմ փաշան ուաշտօնանկ ըրին: 1814 ին Բահլուլ փաշան 1000 քսակ դրամ կաշառք խոստանալով կուսակալին՝ իշխանութիւնը վեր առած եկաւ ի Բայազիտ, որի համար վազրոց գնալով՝ կըդեգերէր անդ:

1000 քսակ դրամ կանխավճար չէ. Ի՞նչպէս պիտի ստացուի, կուսակալը հաւատ չի ընծայեր: Ուստի Բահլուլ փաշան զոյն միամտացնելու համար, Պայազիսոյ 12 անձննք բռնելով՝ իրք գրաւ ուղարկեց ի Կարին, երեելիքն էին Արծրունեաց նաւասարդեան Յակոբ ադան, Սիրունեան Ալլան աղան . . . . ուր կալանաւորեալ մնացին նոքա, մինչ 1000 քսակն առնուեցաւ հայերէն և յղուեցաւ կուսակալին, որ ապա անտի երկոտասանքն արձակուեցան, եկան ի տեղիս իւրիանց:

## Բ.

Բահլուլ փաշան իւր իշխանութեան օրով աւելի քաջ գլունուեցաւ քան իւր նախորդները: Աս թէ կընեղէր, կըդեղեր ալ: Մօտ 2—3 տարւոյ ժամանակամիջոցում, հեազհետէ առանց խուզվութեան և յուզման ըստ կարելւոյն օրինազանց ստահակներն կարգ ու կանոնի բերեց: Աւարաւութեանց առաջքն առաւ, աւազակաց որջերը՝ հովուաց հօտերի փարախ գարձան. անդ այլ ևս հայ հողագործը համարձակ, ապահով իւր արտն ու տափը կարող է հերկել, վարել ու ցանել, գառն ու գայլը միասին կարածեն:

Այս լուրը կալծակի արագութեամբ թռիչք առաւ և ամեն կողմ տարածուեցաւ, ոչ սակաւ ինդացին ու քերկրսցան մոք հեռաւորները, փութացին ու եկան և իւրեանց բնակավայրքն կուտուեցոն:

Սոքա որպէս աշխատասէր ազգ, որը երկու ոտն ունէր, ելկուք էլ փոխ առաւ, շտապ շտապ ինկած այս ու այն կողմ, գլուխն զարկեց քարին, քարը զարկեց պատին. մարդ էր որ այնուհետեւ իր պակաս պռատ գործերը կը հոգար, որը լծու եղին, որը կիթու կովն, այծ ու մաքի, որը ուտելիք, սերմացու ցորեան. կտաւատ, հաճար ու կորեակ, գարի, սապն ու ղոռ փոխով մերձակայ հարուստ քրդերից կը վերցնէին, ոմանք ևս քայքայսւած, քանդած խրճիթներն ու գոմերը կը նորոգէին:

Խոկ թեմականներու հոգեռոր պէտքերն ևս Ս. Յոհաննու վանուց վարդապետներն ու թերուստ ծխական քահանայքն անթերի կկատարէին, որոնք մերթ ընդ մերթ զինուորեալ կայցելէին իրեանց սիրեցեալ հօտին և լքեալ սրտերու միջիթար կը հանգիսանային:

Սակայն ափսառ որ նոցա համար այս պայծառ ու անդոքք օրերը շատ ժոմանակ չտեսեցին: Զի գեռ ռոլորովին իրենց գաղթականութեան տրեխներն չէին մաշուեր, գեռ իրենց գիւղական անշուք խրճիթներն նոր էին զետեղուել՝ նոր էին դոյդն ինչ շունչ քաշել, օրական պարէնն հոյթայթել և ահա երկինքն ամպեց:

Նման զնման սիրէ. անօրէն Հասան խանը՝ որ իւր կենաց բոլոր օրերը եղեռնագործութեամբ և եթ անցուց առ ինքն կոչեց իր շրջակայքն գտնուող քրդական համակ ցեղապետներն և պատուէր տուաւ նոցա կուռ և կազմ լինել յարձակման մը համար և վաղ ընդ փոյթ իւր պարսկական բանակն առած, արշաւեց նոքօք հանդերձ ի վերայ Բայազիտու:

1820ին մինչ նոքա ընդ Օսմանցիս պարարազմէին և ահա Շահզադէն ևս հասաւ յօգնութիւն նոցա, որք յաղթանակն առած անցան ի Մուշ:

Այդ կոուի տաք աւերչութեան ժամանակին, հայի խօսքը կը լինի. թռքքը բերանին չորցած էր, մի ծակը հազար դաշեկանի

կվինդռեն, ոտքի տակ ընկած էին, անցնող գարձողը կրկոխկռտէր կըլլկէին, ծեծէին, կսպանէին, ունեցած չունեցածնին ձեռքերէն կառնէին. ալ տանողը՝ տանողի էր, հարց ու փորձ անող չկար. կուզէ թէ մի կովի պողէն տաս մարդ բռնէր՝ դարձեալ պրծնելիք չկար:

Այսու ամենայնիւ կրակ ու բոց Հասանխանը սորանով ալ չըրբաւականացաւ, նա բանակէն մի ստուար գունդ առած մեկնեցաւ անտի, շուտով ասպատակներ սփռուեցան. գաշտ ու դուրան բռնեցին ձեռք ընկած մնակալ թուրք ու հայ կողոպտեցին, գերի վարեցին Խնուսի, Վարդօյի, Թաքմանի, Քեղիի և այլ և այլ տեղեաց բնակիչները՝ Տուարածատափի վրայով անցան յԵրևան, գերեաց բիւր անէծքն ու աղաղակը իրենց հետ տանելով:

(Նարունակչել)

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՆԿԱՑՈՂՈՒԹԻՒՆՔ.

(Նարունակչել-նկան).

### Ա.Բ.

ԳԵՂՄԱՉԵԱՆԴ ԳԵՂԸ. Նորա անունունիւնը և խալսդովները. շինախան դարակարունիւնը. Օրնաւեանդ ԳԵՂԸ. Նորա հնունիւնները. Բաշշեանդ ԳԵՂԸ. Նորա հնունիւնները և հանդուարանները: Պարմական յիշարականիւնն. Ֆանապարհը Շէպի Սուրբ Աստվածածնի վանքը. Վանի ծառաւարանը. Եիւղեցին. արքաններ. Գանին. Եկեղեցաւ արքանադրունիւնները:

Իջայ կրկին Արփաչայի աղմկալից ափերը, այն տեղ, ուր գետար խառնուելով Ալագեազի կամ Նոյթուլի գետի հետ կազ-